№ 103 ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 17 **1903** ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 17 № 103

ԵՐԵՍՈՒՆՄԻԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 258.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հնագիտական ուսումնասիրութիւններ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Այդ էր պակաս. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վամբէրի Թիւրքիայի մասին. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՕԱՁՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Շաբթէ շաբաթ.

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մեր ընթերցողներին յայտնի է, որ տարի ու կէս սրանից առաջ բացվեց Թիֆլիսում Հնագիտական ընկերութիւն, որի նպատակն է ուսումնասիրել Կովկասը հնագիտական տեսակէտից։ Ընկերութեան բացմանը ներկայ էր յայտնի հնագէտ կոմսուհի Ուվարովա, որի նախագահութեամբ տեղի ունեցան մի քանի հետաքրքրական նիստեր։ Այնուհետև ընկերութիւնը ունեցել է դաշտեալ մի քանի նիստեր՝ պատրաստ զեկուցումները լսելու և ընթացիկ մի քանի գործերը կարգադրելու։

Ընկերութեան գործունէութիւնը դեռ այնպիսի բնաւորութիւն և ծաւալ չէ ընդունել, որ գրաւէ բազմաթիւ անձանց մասնակցելու ընկերութեան պարապմունքներին և նպաստելու նրա գործունէութեան զարգացմանը։ Զեկուցումները կըրում են պատահական բնաւորութիւն և ունեն սահմանափակ հետաքրքրութեան արժէք։

Հնագիտական պարապմունքները, երբ նրանք կրում են չափազանց մասնաւոր դրոշմ իրանց վրա, երբ նրանք չեն շոշափում աւելի ընդարձակ և խոշոր պատմական երևոյթներ, երբ նրանք չեն մտնում մի որոշ գիտակցական ծրագրի շրջան՝—այն ժամանակ նրանք անկարող են հետաքրքրել հասարակութեան մեծ խաւեր և կը մնան միայն մի քանի մասնագէտների և հնասէրների սեփականութիւն։ Մինչդեռ Կովկասում հնագիտական ուսումնասիրութիւնները, եթէ նրանք խելացի կերպով կազմակերպված կը լինեն՝ կարող են շատ օգտաւէտ լինել մեր երկրի թէ պատմական, թէ ներկայ ազգագրական և թէ տնտեսական ու կենցաղավարական երևոյթների քննութեան և մեկնաբանութեան համար։

Հնագիտական ընկերութիւնը պէտք է աշխատէ որոշ ծրագիր մշակելու իր զբաղմունքների համար և ձեռնարկէ մի շարք այնպիսի ուսումնասիրութիւնների, որոնք կարողանան մի կողմից ժամանակակից հետաքրքրութիւն ունեցող մի քանի հարցերի պարզելուն նպաստել, իսկ միւս կողմից տալ գիտական հետազօտութիւններին որոշ սիստեմ և ամբողջութիւն։ Անկասկած, պատահական զեկուցումները և ապագայում կը լինեն որոշ թւով և նրանց մէջ կարող են լինել շատ մեծ արժէք և նշանակութիւն ունեցողները։ բայց ընկերութիւնը կախված չի լինի մի միայն նրանցից և կունենայ իր որոշ ծրագրին համապատասխան գործեր, որոնք տարիների ընթացքում կը պատրաստեն նիւթեր հետաքրքրական եզրակացութիւններ դուրս բերելու համար։

Թիֆլիսում միայն մի անգամ է եղել հնագիտական համագումար ժողով, մի քառորդ դար սրանից առաջ։ Ռուսաստանում պարբերաբար տեղի ունեն այդպիսի ժողովներ։ Նրանցից մէկն էլ անկասկած կարող էր լինել և Թիֆլիսում, եթէ Հնագիտական ընկերութիւնը եռանդով սկսէր աշխատել, հրաւիրէր զեկուցանողների և այնքան հող պատրաստէր, որ ժողով հրաւիրելու դաղափարը համակրութիւն գտներ թէ ընկերութեան անդամների և թէ առհասարակ հնագիտական շրջաններում։ Մի այդպիսի ժողով եթէ լաւ կազմակերպված լինի՝ կարող է էական ծառայութիւն մատուցանել Կովկասի հնագիտական ուսումնասիրութիւնների նպատակայարմար կազմակերպութեան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՅԴ ԷՐ ՊԱԿԱՍ

—

Ի՞նչը—իսկոյն հարցնելու էք դուք։

—«Բուֆֆ» կոչված այգին, որ չինում է տեղական հայ հարուստներից մէկը։

Բայց ինչպէս թէ չինում է,—կը հարցնէք դուք. այգին տնկում են, այլ ոչ չինում։ Այդ էլ իրաւացի է, բայց մեզնում, մեր օրինված Բագուում, տնկելը շատ դժուար է, իսկ չինելը անչափ դիւրին. դրա համար էլ կան այգիներ, որոնք չինվում են. պակասը լրացնում է երեւակայութիւնը։

Ուրեմն մենք, բագուեցիներս, չնորհիւ հայ «բարերարի մը», չուտով ունենալու ենք «Բուֆֆ» այգին։ Միակ պակասը, որը զգացվում էր մեզ մօտ, այժմ լրացվում է, ու մենք ամենայն իրաւամբ կարող ենք այժմ գոչել. «ամենայն ինչ կատարեալ է»։ Մեծ քաղաքների ընակիչներին անծանօթ չեն Պալերմօ, Էրմիտաժ, Ֆանտազիա, Էլդօրադօ, Արկադիա, Բայօկ և այլն այսպիսի անուններ կրող «այգիներ»։ Եւ թող մի միայն քաղաքների ընակիչները ծանօթ լինեն այդ այգիների ներքին կեանքին։ Այգիներ, որոնք գեղեցման են հանդիսանում մեր երիտասարդութեան բարոյականութեան, որոնք մի անյատակ անդունդ են դառնում դառը քրտինքով վաստակած կօպէկների համար...

Ցգելից խմիչքների հազար ու մի տեսակները, անբարոյական կանանց անթիւ ու անհամար վաշտերը—ահա այդ «այգիների» զարդերը։ Արֆեանկաներ, խօրիստկաներ և այլ այսպիսի «արտիստներ»—այդ այգիների «գեղարուեստական մասի» նահատակներն են։ Նրանց պարտականութիւններն են—միշտ համարեա մերկ դուրս գալ հասարակութեան մէջ, անվայել շարժուածքներով պարել, վերշոկներով բարձրացնել ոտքերը և այլն—կայած հասարակութեան տրամադրութեանը.—իսկ որ կը լինի այդպիսի հասարակութիւն և նրա տրամադրութիւնը, կամ աւելի ճիշտը, ճաշակը չափից դուրս զարգացած կը լինի այդպիսի խնդիրներում,—դրանում իսկի կասկած չէ կարող լինել։ Այդ կողմից չէն մնայ Բագուն։

Այգին, ինչպէս զբօսատեղի, անկասկած, գրաւելու է դէպի ինքը ոչ միայն յայտնի «արտիստների», այլ և շատ անմեղ և միամիտ ընակիչների, որոնք կուզենան Բագուի ամառնային անտանելի եղանակից փոքր ինչ ազատվել և զբօսնել մի օրեկ տեղ։ Իսկ ինչ կը սովորեն, ինչ կը վաստակեն այդ «այգիներից»—դա գաղտնիք չէ. փողը իր գործը անում է. չինութիւնը աւարտվում է տեղական արագութեամբ, վերջանում է և «բեմը»,—որովհետև «նրա վրա քալողները» վաղուց եկել և սպասում են։ Այդ այգու համարաւ լսել են նաև Լօսաովի, Օդեսայի և այն այդպիսի քաղաքների պրօֆէսիոնալ «թռչնիկները» և շտապել են այստեղ դերբիտների ու գաստրոլների։

Շուտով տեղի կունենայ այդ այգու հանդիսաւոր բացումը, ապա կը սկսվի «սովորական» կեանքի ընթացքը, աւելացնելով Բագուի բազմաթիւ «աղատ տիրոյ ապաստարանների» թիւին և մի նորը։ Մի քանի տարի առաջ կար նոյնանման «Էրմիտաժ» այգի, որը նոյնպէս պահում էր մի հարուստ հայ ազգային, բայց այդ այգին չդրացաւ՝ իր տիրոջ մանկանալուց և բանտ ուղեւորվելուց յետոյ։ Այժմ հանդէս է գալիս մի ուրիշը, աւելի լայն և ընդարձակ ծրագրով...

Ժողովրդական թատրոնը թափառում է այստեղ և այնտեղ, որովհետև մի ծածկ չունի, որտեղ պատսպարվել կարողանայ, իսկ Բագուի հարուստը արֆեանկաների և խօրիստկաների համար բեմ է չինում։ Մի նոր, ինքնուրոյն պիեսա ներկայացնելիս թէ հայ հարուստը, թէ հայ արիստոկրատիան զլանում է իր կօպէկները տալ՝ պահելով «Բուֆֆ» և այն սրա նման այգիների համար. իսկ հայ հեղինակը և դերասանը իրանց գրպանից են ծածկում նոր, ինքնուրոյն պիեսայի առաջացրած ծախքերը... Ինչով երջանիկ ազգ չենք, ինչով նախանձի առարկայ դարձող ազգ չենք։ Ի՞նչ անենք, որ հայ հարուստի ձեռքը կոտրվում է գրպանը տանելիս՝ մի դպրոցի փող տալու համար, իսկ նրա ձեռքը զօրում է մի նոր այսպիսի չէնք աւելացնելու համար...

Ռ. Յովհաննէսեան

Բագու.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Կարս, ապրիլի 25-ին

«Մշակ»-ի 82 համարում պ. Նոհրատեանը իր թղթակցութեան մէջ, մեզ մեղադրում է թիւրքական կեղծ ոսկիներ տարածելու և ժողովրդին հարստահարելու համար։ Պարոնը եթէ կը ցանկար «հարստահարվածին պաշտպանելու զգացմունքից դրդված մի քանի պարոններին», իբրև ճշմարտութեան պաշտպան, լրագրութեան նիւթ դարձնել մեր առևտուրը, իբրև թղթակից նա պէտք է փաստեր հաւաքէր, հասարակութեան անդամներից ստուգէր գործի եղելութիւնը և ապա գրէր։—Բայց պ. Նոհրատեանը յեղաշրջել է ամեն ինչ։

Մեր ժողովրդի մի որոշ դասակարգի մէջ մի վատ սովորութիւն է տարածված, այն է՝ նշանդրէքի, հարսանեաց, հարսանիքի և ուրիշ ժամանակներ նորահարսին ընծայում են թիւրքական զանազան ոսկեդրամներ իբրև զարդարանք։ Վերջին տարիներս այդ սովորութիւնը աւելի շատ է տարածված մեր թէ հարուստ և թէ հասարակ դասակարգի մէջ։ Իր մօրը կամ կնոջը վրա այդ դրամական զարդերը չունեցողը կը բամբասվի իբրև ժլատ և չունևոր։

Տարիներ առաջ թիւրքական այդ ոսկեդրամներ, որի համար շատ չնորհակալ կը լինենք...

Մեր հասցէն, եթէ ուզէք իմանալ՝ станица Богарсукская, Артему Тарасичу Мазлумову, ուղարկէք մեզ ձեր կարէթը наложеннымъ платежомъ. ամէն»։

Միւսը.

«Պարոն խմբագիր.

«Այս փոստով ուղարկել եմ ձեզ իմ վէպը, որ լինի романъ. կարդացէք ուշի ուշով. մի վեց տարի շարունակ ես պարապում եմ գրականութեամբ։ Եթէ վէպս հաւանէք՝ ես ունիմ և շարունակութիւնը. այնտեղ հերոսներից մէկը (герой) պէտք է իրան սպանէ։ Եթէ այդ յարմար չէք գտնի, կարող եմ նրան Պարսկաստան ուղարկել և կամ բանտը նստացնել։ Խնդրեմ մանրամասն յայտնէք ինձ, ինչպէս է ձեր կարծիքով աւելի յարմար։

«Ուղղեցէք տառասխալներս. ես բառարան չունէի մօտս։

«Բարև ձեզ և ձեր խմբագրութեան բոլոր անդամներին նաև նրանց ընտանեացը։

Արցախ-զատէ։

«Ց. Գ. ունիմ նաև ոտանաւորներ։ Հասցէս կը գտնէք վէպիս երեսին»։

Մի ուրիշը։

«Մեծ «Մշակի» պարոն խմբագիր։

Քրիստոս յարեաւ ի մեռելոց. չնորհաւոր Զատիկ։

Երկու չաբթից աւելի է՝ ինչ մեր քաղաքումն է Սիբանուշի խումբը. տալիս է թատրոն, որը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇԱԲԹԷ-ՇԱԲԱԹ

—

Մտայ խմբագրատուն։

Իմ ետեւից ներս մտաւ մի ծերունի քահանայ։

—Ո՞վ է ձեզնից խմբագիրը,—դիմեց նա ներկայ եղողներին։

—Ի՞նչ էք ցանկանում,—հարցրեցին։

—Իմ յօդուածս ինչու չէք տպել... մի ամսից աւելի չարչարվել եմ, դիշերները անքուն եմ մնացել, գրել եմ, ուղղել, նորից արտագրել, հարազատ որդուս պէս խնամել եմ, հոգս տարել և վերջապէս, երբ պատրաստ էր, վախենալով որ պօստում կորչի, ձեր ձեռքը չը հասնի՝ «զակազնոյ» եմ արել. մի ամիս շարունակ անձրևին, ցեխին պօստատուն եմ գնացել, սրտի բաբախումով բացել եմ ձեր լրագրի իւրաքանչիւր համարը, յուսալով այնտեղ տպված տեսնել յօդուածս. բայց ի զուր... կոտրած սրտով տուն եմ եկել, յոյսս դրել յաջորդ պօստի վրա... բայց իմ յօդուածս չը կար ու չը կար. և ահա այսօր յուսահատված, վեր եմ կացել հարիւր վերստ արել, ձեզ մօտ եմ եկել... Ասացէք խնդրեմ, ինչու իմ յօդուածը չէք տպել...

—Երևի, խմբագրութիւնը անյարմար է գտել տպելու,—պատասխանեցին նրան հանգիստ կերպով։

Քահանան գոյնը գցեց. նրա շրթունքները դողդողում էին։

—Ի՞մ յօդուածը... անյարմար, ինչու, ինչ էի գրել, որ անյարմար էր. Աստուած վկայ, իմ գրածիս մէջ ոչ մի անյարմար բան չը կար... ես գրել էի իմ անզգամ ընկերոջս մասին, նրա զեղծումների, նրա անիրաւութիւնների մասին. փաստեր էի բերել... ախար չը գիտէք, նա մի կատարեալ չարիք է դիւղի համար։

—Բայց ինչու այդ մասին չը դիմեցիք կոնսիստորիային, առաջնորդին։

—Քանի անգամ դիմած լինեմ լաւ է. հինգտասն անգամ... բան չէ դուրս գալիս. մի քանի անգամ ինքս եմ եկել, ինձ նոյն-իսկ ներս մտնել չեն թողել... ինչ անէի, ուամը դիմէի... կաղաչեմ ձեզ, պարոն խմբագիր, և ձեզ պարոններ, տպեցէք իմ յօդուածը. խղճացէք... ես խեղճ քահանայ եմ... տպեցէք յօդուածս...

Քահանայի աչքերի մէջ արտասուքներ երեւացին. նա հանեց գրպանից կարմիր թաշկինակը և մօտեցրեց իր աչքերին...

—Լաւ, տէր հայր, մենք մէկ էլ կը կարդանք, կը օգտվենք, գուցէ լուրի նման մի բան չինենք։

—Օ՜հ, ոչ, ոչ, բոլորը տպեցէք, խղճացէք ծերութեանս... մի ամիս տանջվել եմ դրա վրա, տաս թերթ թուղթ եմ փչացրել, որդուս նման սիրել եմ... տպեցէք բոլորը...

Ծիծաղն ու խղճահարութիւնը փոփոխակի անցնում էին մեր բոլորիս երեսի, սրտի, հոգու վրա։

—Լաւ, նորից կը կարդանք... պատասխանեցին, նրան հանգստացնելու համար։

—Հա, ձեզ մատաղ, կարդացէք, լաւ կարդացէք... Աստուած վկայ լաւ բան եմ գրել... կարդացէք, և դուք անպատճառ կը տպէք։

Քահանան դուրս եկաւ՝ վերջին անգամ պաղատագին հայեացք գցելով ներկայ եղողներիս վրա։

Բերեցին փոստը։

Մի կոյտ նամակներ էին։

Խմբագիրը մկրատը ձեռքին կտրում էր ծրարները։ Նրանց մէջ կային մի քանի օտարոտի նամակներ, որոնց նմուշները ես առաջ կը բերեմ։

Ահա մէկը.

«Մեծապատիւ բարերար պարոն «Մշակ»։

«Եթէ մեզնից հարցնէք՝ փառք Աստուծոյ, ողջ ենք և առողջ և ձեր ողջութիւնը կը ցանկանք Ամենակարողից—ամէն։ Մենք, պարոն «Մշակ», ամեն անգամ մեծ ուրախութիւնով կարդում ենք ձեր գրածները և հոգով ուրախանում ենք. Աստուած ձեզ աւելի չնորհք տայ. բայց ափսոս որ բոլորը գրած է հայերէն։ Այստեղի հայերը ռուսների մէջ են, հայերէն լաւ չեն իմանում. կը խնդրէինք մէկ մէկ գրէիք և ռուսերէն. գրեցէք ձեր կողմի առուտուրի մասին, նաև ցորենի գնի մասին, նաև թէ քանով է ծախվում այդտեղ պտղեղէնը փթով, վագօնով և բօշնիչ-նի, որի համար շատ չնորհակալ կը լինենք...

Մեր հասցէն, եթէ ուզէք իմանալ՝ станица Богарсукская, Артему Тарасичу Мазлумову, ուղարկէք մեզ ձեր կարէթը наложеннымъ платежомъ. ամէն»։

Միւսը.

«Պարոն խմբագիր.

«Այս փոստով ուղարկել եմ ձեզ իմ վէպը, որ լինի романъ. կարդացէք ուշի ուշով. մի վեց տարի շարունակ ես պարապում եմ գրականութեամբ։ Եթէ վէպս հաւանէք՝ ես ունիմ և շարունակութիւնը. այնտեղ հերոսներից մէկը (герой) պէտք է իրան սպանէ։ Եթէ այդ յարմար չէք գտնի, կարող եմ նրան Պարսկաստան ուղարկել և կամ բանտը նստացնել։ Խնդրեմ մանրամասն յայտնէք ինձ, ինչպէս է ձեր կարծիքով աւելի յարմար։

«Ուղղեցէք տառասխալներս. ես բառարան չունէի մօտս։

«Բարև ձեզ և ձեր խմբագրութեան բոլոր անդամներին նաև նրանց ընտանեացը։

Արցախ-զատէ։

«Ց. Գ. ունիմ նաև ոտանաւորներ։ Հասցէս կը գտնէք վէպիս երեսին»։

Մի ուրիշը։

«Մեծ «Մշակի» պարոն խմբագիր։

Քրիստոս յարեաւ ի մեռելոց. չնորհաւոր Զատիկ։

Երկու չաբթից աւելի է՝ ինչ մեր քաղաքումն է Սիբանուշի խումբը. տալիս է թատրոն, որը

ները մեր երկիրը ներմուծվում էին իբրև թիւրքական պետական դրամներ. բայց 4—5 տարի առաջ մեր իշխանութիւնը, նկատելով այդ ոսկիների իբրև ապրանք վաճառվելը, ենթարկեց մաքսի և դրոշմ (պրոբ) խփելու կանոնին։ Ոսկու առևտրով պարապող վաճառականները, օգտվելով այդ նոր կարգադրութիւնից, սկսեցին, իբրև վաճառելու ապրանք, ապսպրել արտասահմանի վաճառանոցներում պատրաստել թիւրքական ոսկեդրամներին յար և նման չինուածքներ։ Այդ չինուածքները բերվում են զանազան կշիռներով, արծաթով և պղնձով բաղադրված, 92, 82, 72, 56 պրոբներով, իսկ արծաթ—95, 84 և այլն պրոբներով։ Թիֆլիսում մի քանի վաճառականներ պարապում են այդ առևտրով, որոնցից մէկը պ. Նոհրատեանի «խազէյինների» է։ Հասարակութիւնը գնում է այդ զարդարանքները իբր անհրաժեշտ պահանջ։ Իւրաքանչիւր գնող, նայած իր վիճակին ու քսակին և ապրանքի ծանրութեանն ու պրոբին՝ սակարկութեամբ կը գնէ։—Պ. Նոհրատեանը զբաղվում է մեզ։ Մենք բնաւ ոսկեջրած արծաթը ոսկու փոխարէն չենք ծախած։ Ապրանքը բացարձակ հրապարակ դրած՝ դրոշմված պրոբի համեմատ կը ծախենք։ Պ. Նոհրատեանը այդ շատ լաւ գիտէ. նա շատ անգամներ գնած է մեզնից, երբ մեզ բարեկամ էր։

Ահա իրանց ժողովրդի առաջնորդ համարող մի քանի վաճառականների բարքերը, որոնց գովաբանում է պ. Նոհրատեանը։ Փոխանակ արդար ճանապարհով մեր հետ մրցելու, պ. վաճառականները ստոր միջոցների կը դիմեն մեր վարկը ձգելու, չար նախանձով գրգռված։

Մեր ծախածն է արծաթ 95 պրոբ, որ ոսոիկանութեան մօտ նոյնը հաստատած է և մեզանից գնող պ. Քէնդէրեանը։

Գործը յանձնված է դատարանին. ապագան ցոյց կը տայ արդարութիւնը։

Եղբարք՝ Մ. Կոնդաղչեանց, Ս. Կոնդաղչեանց, Մ. Կոնդաղչեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Զորեքշաբթի, մայիսի 14-ին, տեղի ունեցաւ Թիֆլիսի Հայուհեաց ընկերութեան կազմակերպած զբօսանքը Թիֆլիսի ժողովարանի ամարային այգում։ Զբօսանքը գրաւել էր մեծ բազմութիւն, մինչև 3000 անձ։ Զբօսանքի ծրագիրը մեծ հաւանութիւն գտաւ հանդիսականների կողմից։ «Զան-գիւլումը» և «Հարսանեկան գնացքը» ունէին թէ ազգագրական և թէ գեղարուեստական նշանակութիւն։ Երգեցիկ խումբը զետեղված էր բարձրադիր մի տախտակամածի վրա բոլորովին բացօդեայ, իսկ շուրջը կանգնած էին հանդիսականները։ «Զան-գիւլումի» և «Հարսանիքի» երգերը կատարում էր Պ. Կարա-Մուրզայի պատրաստած երկսեռ խումբը։ Նուագում էին թէ ասիական և թէ եւրոպական երաժշտութիւններ փոխ առ փոխ։ Այգու զանազան տեղերում բացված էին շքեղ խանութներ։ Հանդիսականների մեծամասնութիւնը բաղկացած էր հայերից։ կային և շատ կողմնակի հետաքրքրվողներ օտարներից։ Ընդհանուր մուտք, որքան լսեցինք, եղել է մօտ 2300 րուբլի։

—

Կարսի մեր թղթակիցը հեռագրում է մեզ հետևեալը. «Գալատը հաստատեց Թիֆլիսի նահանգական դատարանի արդարացուցիչ վճիռը «Մշակի» աշխատակից Տէր-Ներսէսեանի գործի առիթով, որը մեղադրվում էր Զաքար Զանփոլադովին անուանարկելու մէջ։ Մեղադրում էր Օպոչինին, պաշտպանում էր Յովհաննիսեանը։

—

«С.-Петерб. Жизнь» պատկերազարդ թերթի մայիսի 11-ի համարում տպված է Իւրի Վեսելովսկու մի ոտանաւորը, «Մահ Վարդան Մամիկոնեանի» վերնագրով։ Բանաստեղծութիւնը նուիրված է Վ. Մամիկոնեանի հերոսական քաջութեան։

—

«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ Խրիմի թաթարների փախուստը ուղղակի տաբերական ընաւորութիւն է ստանում։ Այս օրերս Ռուսաց շոգենաւային և առևտրական ընկերութեան «Олегъ» շոգենաւով ճանապարհ ընկան Կ. Պոլիս Խրիմի 600 թաթարներ, որոնցից 75 ընտանիքներ գաղթականներ են։ Այդ ժամանակ, ժանդարմային ունտէր-օֆիցէրները, Խրիմի լրագիրների խօսքով, բռնեցին չորս երիտասարդ թաթարների, որոնք հագել էին կանացի զգեստներ, և աշխատում էին գաղտնի կերպով նստել շոգենաւը և արտասահման փախչել։

—

Մայիսի 9-ին, ինչպէս հաղորդում են Պետերբուրգից «Рус. Вѣд.» լրագրին, տեղի ունեցաւ Պետրոս Մեծի յիշատակին նուիրված ցուցահանդէսի բացումը Ամարային Պարտէզում։ Ցուցադրված բոլոր առարկաները, որոնց թիւը հասնում է 600-ի, կապ ունեն Պետրոս Մեծի անձնաւորութեան հետ. նրանք կամ պատկանելիս են եղել Պետրոս Մեծին, կամ ռուսական մեծ ըէֆորմատորը ժամանակաւորապէս օգտվել է նրանցից։ Առարկաների մեծ մասը այժմ պետութեան սեփականութիւնն են կազմում։

—

Ռուսաց պարբերական մամուլի 200-ամեայ գոյութեան տարեդարձի առիթով, որ լրացաւ այս տարի, ներքին գործերի մինիստրութիւնը թոյլ է տուել գրականագէտների և գիտնականների փոխադարձ օգնութեան ընկերութեան՝ նուիրատուութիւններ ժողովել՝ հիմնելու որևէ օժանդակ հաստատութիւն գրականագէտների համար—գրականական տուն, սանատորիա և այլն. իսկ եթէ ժողոված նուիրատուութիւնների գումարը բաւական չի լինի հիմնելու որևէ այդպիսի հաստատութիւն՝ ապա թոյլ է տրվում ընկերութեան՝ միացնել ժողովված գումարը կենսաթոշակի դրամագլխի հետ։

—

Երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութեան մէջ՝ գինեգործների նոր բերումս տեղի ունեցած խորհրդակցութեան ժամանակ որոշվեց արգելել գինու հետ խառնել որևէ կողմնակի նիւթ՝ գինու յատկութիւնը բարւոքելու նպատակով, թէպէտև խառնված նիւթերը լինեն բոլորովին անվնաս։

—

Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը կարգադրեց, որ երկաթուղիական այն պաշտօնեաները, որոնք հնարաւորութիւն կը տան ճանապարհորդներին առանց տոմսակի ճանապարհորդել երկաթուղիներով՝ պէտք է այդ յանցանքի համար քրէական պատասխանատուութեան ենթարկվեն։

—

Պետերբուրգում,—լրագիրների խօսքով,—հիմնվեց մի հրատարակչական ընկերութիւն, որը մտադրութիւն ունի հրատարակել խօսակցական-հրէական լեզուով ռուս և արտասահմանեան լաւագոյն գրուածքները ըստ կարելոյն մատչելի գնով։

—

Հիւանդ չքաւոր օրիորդի օգտին ստացանք Դուրօվկայից Թովմաս Մարգարեանից—5 ր., Էջմիածնից, Եղիշէ վարդապետ Ահարոնեանից 5 րուբլի։

—

ԼԱՑՊՅԻԳԻՑ մեզ գրում են. «Մայիսի 22-ին Համբուրգում կը կայանայ յօգուտ թիւրքահայերի մի կոնֆերանս, ուր խօսելու են գերմանացի յայտնի վիպասանուհի Իլզէ Ֆրապան և պ. Լ. Բաբայեան»։

—

ՂՇԼԱՂ գիւղից (Շուշու գաւառ) մեզ գրում են. «Ապրիլի 22-ին կարկուտը և հեղեղը 10 րոպէի ընթացքում ոչնչացրին Խաչէնի մի քանի գիւղերի արտերը և այգիները։ Ղշլաղ, Բաղլուջայ, Խանածախ, Կարկաժան գիւղերի թէ արտերը և թէ թթի այգիները փչացել են մեանգամայն։ Կիսով չափ վնասվել են՝ Շալվա, Սարդարաչէն, Նորագիւղ և Դաշբուլաղ գիւղերի ցանքերը։ Այսպիսով, տասը տարի անընդհատ շարունակվող անբերրիութեան վրա աւելացաւ մի տարի էլ։ Կարծէք բնութիւնը վճռել է ոչ մի տարի անպտուղ չը թողնել խաչէնցիներին։ Ի՞նչ անեն հիմա գիւղացիները, ո՞ւր գնան, ո՞ւմ ձեռք մեկնեն հաց խնդրելու իրանց թշուառ գոյութիւնը պաշտպանելու համար։ Վաշխառուն այլ ևս փող չէ վատահանում խաչէնցուն. նրա յոյսերն էլ են խորտակվել, գիւղացին այլ ևս ոչինչ չունի նրան տալու։ Մինչև այժմ վաշխառուների դրամարկղը միշտ բաց էր նրանց առաջ, որոնք Բագու—Բալախանի էին գնում փող աշխատելու. այժմ այդ կրեդիտն էլ փակվել է խեղճերի առաջ, Բագուում տիրող դրամական ճգնաժամի պատճառով։ Այս բոլորի վրա աւելացնենք նաև «մորեխակոռը», որ տարիների ընթացքում միշտ պատուհասել է գիւղացիներին՝ իլելով մեծ քանակութեամբ բանւոր ձեռքեր՝ աշխատանքի ամենաեռուն ժամանակը։ Եթէ օգնութիւն չը հասցնվի վնասված գիւղացիներին՝ սոսկալի դրութիւն կը ստեղծվի»։

—

ԱՐԴՎԻ գիւղից (Լոռի) մեզ գրում են. «Ապրիլի 27-ին, հողին յանձնվեց ինժեներ-տեխնոլոգ Միքայէլ Քալանթարեան որ, ինչպէս յայտնի է, ապանվեց Բալախանիում երկու արհեստաւորների ձեռքով։ Ապրիլի 26-ին հանգուցեալի դիակը երկաթուղու գնացքով հասաւ Սանահին կայարանը։ Բայց որովհետև դագաղը թողնված էր Նաւթլուղի կայարանում՝ ուստի հոգեւորականութիւնը ժողովրդի հետ ի միասին ուղևորվեցին այնտեղ հոգեհանգստեան կարգը կատարելու։ Դագաղի վրա դրված են պսակներ. «Մանթաշեան և ընկ.» վարչութեան կողմից՝ կենդանի ծաղիկներից հիւսուած, և բացի դրանից 14 պսակ էլ Բագուից, «Մանթաշեան և ընկ.» Բագուի բոլոր մասերի արհեստաւորներից, ծառայողներից, ընկեր-պաշտօնակիցներից, գրասենեակների ծառայողներից։ Պսակներից երեքը հանգուցեալի ստորադրեալ արհեստաւորների կողմից էին այսպիսի մակագրութիւններով.—Միքայէլ Օ. Քալանթարեանցին, Մանթաշեան և ընկ. Զաբրատի արհեստաւորների կողմից ի ցոյց անկեղծ յարգանաց և որպէս բողոք այս դաժան եղեռնագործութեան դէմ, որով երկու արհեստակիցներ ենթարկեցին մեզ ամօթի և նախատինքի»։ Պսակներից մէկն էլ արծաթեայ էր՝ «վաղաժամ հանգուցեալ ընկեր, անխոնջ աշխատաւոր Մ. Օ. Ք.-ին սրտագին ողբացող Լևոն Ա. Մանթաշեանից»։ Բագուից դագաղին ուղեկցում էին տասը պատգամաւորներ՝ Ա. Մանթաշեան և ընկ. վարչութեան կողմից։ Սանահին իջնանում արդէն սպասում էին Լոռու զանազան գիւղերից եկած պատգամաւորները և երեսուն երիտասարդ տղաներ, որոնք դագաղի առջևից տանում էին պսակները. իսկ դագաղը տանում էր սայլակը, ճանապարհի վատութեան պատճառով։ Ուղղակի և միւս գիւղերում դագաղը դիմաւորեցին բազմաթիւ մարդիկ։ Թաղման օրը, ապրիլի 27-ին, ահագին բազմութիւն էր հետևում դագաղին. գիւղացի երիտասարդները դագաղի առջևից տանում էին պսակները։ Տանից մինչև եկեղեցի, դագաղը ձեռքների վրա բարձր բռնած՝ տարան Բագուի պատգամաւորները։ Պատարագիչը Սանահնի վանահայր Սաթունեան եպիսկոպոսն էր, որ վերջում դամբանական խօսեց. այնուհետև գերեզմանի մօտ կարդացվեց պ. Ե. Խարազեանի մի սրտագին ճառը»։

—

ՇՈՒԼԱՒԷՐԻՑ մեզ գրում են. «Ինչպէս լսում ենք, պ. Ռոստոմ Մարտիրոսեանը Շուլաւէրում կիրակնօրեայ դպրոց բանալու իրաւունք ստանալու համար դիմել էր կովկասեան ուսումնարանական իշխանութեան, որից արդէն իրաւունք է ստացել։ Շատ կարելի է սեպտեմբերից աջողվի ուսումնարանի դուռը բանալ մեր ուսումնածարաւ ժողովրդի առաջ ու փակել գիւղատների դռները։ Ցոյս ունենք, որ կիրակնօրեայ դպրոցի ծախքը հոգացող յարգելի պարոնը կը նպաստէ նաև ընթերցարանը բանալուն, որով և միջոց կը տայ կիրակնօրեայ դպրոցին իր բուն նպատակին ծառայելու։ Ցոյսով ենք նաև, որ քաղաքներում ապրող ապահով շուլաւէրցիք անտարբեր չեն գտնվի դէպի իրանց հայրենի գիւղը և օգնութեան ձեռք կը մեկնեն մեզ»։

ԱՐՏԱԳՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՄԲԵՐԻՆ ԹԻՒՐՔԻԱՑԻ ՄԱՍԻՆ

I

Բարենորոգումների հարցը նոր չէ Թիւրքիայի համար։ Ամբողջ XIX-րդ դարի ընթացքում նա շարունակ խանգարել է սուլթանների

մենք չատ ենք սիրում և ամեն անգամ գնում ենք բիլէթ առնելու. բայց գինը այնքան թանգ է, որ մենք առնել չենք կարողանում։ Խնդրեմ, պարոն խմբագիր, գրէք Սիբանուշին, թող բիլէթները մի քիչ էժանացնի։ Ախար մենք էլ մեղք ենք...

Երևանցի մի խումբ արհեստաւորներ

Մի այլ նամակ.

«Милостивый Государь!

«Ինձի ասին, որ մեզի համար ձեր գազէթին մէջ плохой отзывъ дали, այդ, խորթ ասած, не дѣлаетъ Вамъ чести. ադոր համար, փոխայոյսա, չուտ խրկեցէք ձեր գազէթին ան նոմէրը, որ ես գիտնամ վրի է այդ կլեվետնիքը և տուդին պռաչենի տամ։ Ես ունիմ մեծ մագազին, торгую гуртомъ, և պռիկաչչիքներս ինձի վրա կը խնդան չընտրդ. а можетъ быть, одинъ изъ этихъ негодяевъ։ Երկում իմ այդ նոմէռին համար 40 քափիկ արծաթ։

«Симферопольскій второй гильдіи купецъ Аѳанасій Петровичъ Чамичовъ»։

«Հինգերորդը.

«Ազգի մեծ բարերար պ. խմբագիր, որ ի Թիֆլիզ։

«Պարտք եմ համարում ձեզ մի մեծ ուրախութեան աւետիս տալ։ Մեր գիւղի սարերի մէջ զանազան հանքեր են երևացել. կայ երկաթ, պղինձ, արծաթ, որ մարդ լաւ ման գայ՝ ոսկի էլ կը գտնվի։ Մենք այդ մասին ոչ ոքի չենք յայտնում, վախենում ենք մեր հանքերը խլեն մեր ձեռքից. շատ և շատ խնդրում եմ ձեզնից, թէ ժամանակ ունենաք՝ ինքներդ եկէք կամ մի ինչիներ ուղարկէք, թող դայ տեսնի. թէ հաւանի, սկսենք հանքը հանել՝ կէսը մեզ, կէսը՝ ձեզ։ Պայմանը չատ ձեռնտու է. կը սպասենք ձեր ուղարկած մարդին։ Խընդրեմ ոչ ոքի այս մասին չը յայտնէք։ Թիֆլիսից չորս օրվայ ճանապարհ է։

«Ի դիմաց գիւղի հասարակութեան տանուտէր Վարթան Մանուկով»։

Այս նամակի տակ ոչ գիւղի անունը կար, ոչ թիւ։

Պարզ էր, որ գաղտնիքը չատ խիստ էր պահվում։

Մի ուրիշը գրում էր.

«Այս էլ չորրորդ անգամն է ձեզ յօդուած եմ ուղարկում, և դուք չէք տպում։ Դա ինձ չատ է ցաւեցնում։ Կարծում էի, երկար է, դրա համար չէք տպում. կարճացրեցի. բայց դարձեալ չը տպեցիք... էլի երկար գրեցի. այդ էլ չը տպեցիք։ Իմ ոճը վատ չէ. ում կարդացել եմ՝ հաւանել են. ուրեմն ինչու չէք տպում։ Երևի իմ մասին ձեզ վատ բաներ են հասկացրել. այն ժամանակ գրէք ինձ պարզ, որ ես իմանամ և զուր տեղը ոսկի ժամանակս չը կորցնեմ. իսկ թէ տպելու էք՝ չուտ տպեցէք, որովհետև բոլոր իմ ծանօթները գիտեն, որ ես ձեզ յօդուած եմ ուղարկում, և, տեսնելով որ չէ տպվում՝ իրանց մէջ ծիծաղում են ինձ վրա. թէ ձեզ գրածներս դուր չեն գալիս՝ խնդրեմ գրէք ինչի մասին գրեմ, որ տպվի։ Անհամբեր սպասում եմ պատասխանին։ Հասցէս ձեզ յայտնի է։ Մէլիք»։

Մի դերասան բաց նամակով գրում է.

«Ահա մի ամիս է, արտասահմանումն եմ. եկել եմ կատարելագործվելու. լինում եմ թատրոններում. դուք միշտ գրում էիք, որ ես թոյլ եմ. յոյս ունեմ, մի քանի ամսից՝ աւելի ուժեղ տաղանդով և հարուստ բեպերտուարով դուրս գալ հայ հասարակութեան առաջ։ Այն ժամանակ դուք իմ մասին ուրիշ կարծիք կը կազմէք։ Այս մասին գրէք ձեր լրագրում»։ Ձեր... ստորագրութիւնը անընթեռնելի էր»։

Մի ուսանող գրում է արտասահմանից.

«Երկու ամսից ի վեր բարերարիցս խոստացած ամսականը չը ստանալուց յետոյ, երեկ ստացայ նրանից հետևեալ նամակը. «Ինչպէս ձեզ ես յայտնի պէտք է լինի՝ Բագուի գործերը ահա երկու տարի է վատ են գնում, իսկ իմ՝ աւելի վատ։ Զորսից աւելի նաւթահորերս ոչինչ չը տուեցին և ինձ վրա 160 հազարի չափ փող նստեցին. միւս կողմից՝ մարդու տուեցի իմ աղջկանս՝ Նատաշիս. փեսան քառասուն հազար էր պահանջում. 30-ով վերջացրեցի, որից 15-ը վեքսիլներով. կինս անցեալ տարի միամտաբար Կիսլովոդսկում իր անունով մի դաչա գնեց, որի համար ստիպված եղայ 20 հազարի չափ վճարել, իսկ այս տարի մեծ ըէմոնտ ունեմ։ Կառավարիչս միւս կողմից խաբեց. մի խօսքով քարուքանդ եմ եղել և մնանկութեան դռան եմ հասել. այսպիսի պայմաններում, բնական է, որ անկարող եմ խոստացածս ամսական 25 րուբլին ձեզ ուղարկել. ուստի ներեցէք ինձ։ Անիծվի բախտը... Ձեր բարերար և բարեկամ Կ. Սամուրեան»։

«Այժմ ինչ անեմ, մի հնար ցոյց տուէք», վերջացնում էր իր նամակը բարերարված ուսանողը։

Ահա և վերջին նամակը.

«Սիրելի պարոն խմբագիր!

«Ահա վեց ամիս է, ես տանջվում եմ իմ բարբարոս ամուսնու ձեռքում. ոչ թատրոն, ոչ երեկոյթ և ոչ նոյն-իսկ իմ մօտ ընկերուհիներիս այցելելու իրաւունք է տալիս, այլ դրած առաջս «Подарокъ молодымъ хозяйкамъ»—զանազան տուպեր և սօուսներ պատրաստելու գիրքը՝ ստիպում է ինձ տանտիկին դառնալ... Вотъ тиранъ...

«Ինդրեմ ցոյց տուէք, ինչ միջոցով կարող եմ ես ազատվել ստանալ. գնամ էջմիածին, թէ խնդիրք ուղարկեմ։ Պատասխանի համար ուղարկում իմ մի հատ 7 կոպէկանոց մարկա։

«P. P. S. Ուղարկեցէք Շիրվանզադէի «Ունէր իրաւունք» դրամն, միայն ոչ այն փոփոխութեամբ, որ տպված է «Լուսայի» մէջ»։

Մի օրվայ համար այսքան էլ բաւական էր։

Ներս մտաւ մի պարոն։

Ես դուրս եկայ խմբագրատնից։

Ստորագրեալ

հանգստությունը, շարունակ զբաղեցրել է եվրոպական դիպլոմատիային։

Սոցիալական-տնտեսական չարիքն իր երկարատև գոյությամբ խոր արմատներ է գցել այդ լայնարձակ երկրում, վերացրել է ազգաբնակության կեանքի և գոյքի ապահովությունը և դրանով առաջ է բերել մի հիանդոտ դրություն։

Այո, հիանդոտ է Թիւրքիան, և նրա համար բժշկի դեր կատարել է ուզում Եւրոպան։

—«Բժիշկ Եւրոպան, ասում է Թիւքաբէր Նաումանն *), ամեն անգամ իր հիանդին մոտենալիս՝ «բարենորոգումներ» է առաջարկում. սակայն հիանդն զգում է, որ ինքն այդ դեղն ընդունել չէ կարող։ Նա միշտ պատասխանում է. «Ի հարկէ, պարոն բժիշկ», բայց առաջարկված կաթիլները Բոսֆորի ալիքներին է խառնում»։

Նյասիկ խօսքեր են դրանք, որ միշտ ճշտությամբ իրագործվել են սուլթան Մահմուդի, Մէջիդի, Ազիզի և այժմեան սուլթան Համիդի օրերում։

Սուր նկատողություն է դա, որի դառնությունն իրանց կաշու վրա փորձել են սերբերը, յոները, ռումինները, բոլգարները, հայերը և մակեդոնացիները։

Տարիներ, տասնեակ տարիներ անցել են միմեանց յետևից, բայց դրությունը չէ փոխվել, չարիքը չէ վերացել։ Եւ ահա այսօր նոյն ճշմարտությունը խոստովանում է մի ուրիշ Թիւրքաբէր՝ աւելի հռչակաւոր, աւելի ազդեցիկ, քան թէ գերմանացի Նաումանն։

Պրոֆէսոր Վամբերին է այդ Թիւրքաբէրը—այն Վամբերին, որ հայկական կոտորածների ժամանակ աշխատում էր եւրոպացիներին համոզել, թէ Թիւրքերը մեղաւոր չեն, թէ նրանք կուլտուրական ժողովուրդ են, թէ անարդարություն է նրանց դատապարտելը. այն Վամբերին, որ առանց ճնշվելու գրում էր, թէ հայերը չափազանց սակաւաթիւ են Փոքր-Ասիայում, ուստի և չարժէ նրանց համար յատուկ բարենորոգումներ մշակել, թէ աւելորդ է քիւրդերի վրա խիստ մեղադրանքներ բարդել *) և այլն և այլն։

Ահա այդ միևնոյն անձնաւորությունը, որ տասնեակ տարիների ընթացքում ուսումնասիրել է Թիւրք ցեղի առանձնայատկությունները և միշտ զովաբանել՝ նրանց, որ անձնական բարեկամությունն է վայելել սուլթան Համիդի կողմից և միշտ արդարացրել է այդ բարեկամությունը՝ այժմ հրապարակ է եկել Թիւրքիայի մասին մի դառն ճշմարտություն խոստովանելու։

Գերմանական «Deutsche Revue» ամսագրի վերջին (մայիս) համարում նա մի ընդարձակ յօդուած է զետեղել մակեդոնական հարցի մասին—մի հետաքրքիր յօդուած։

—«Թիւրքիայի քրիստոնեայ հպատակները—բոլգարները, սերբերը և յոները, ասում է Վամբերին, ամենից առաջ ուզում են ազատվել Թիւրքական լծից. ուստի և այն ամենը, ինչ որ Թիւրքերից է ըղխում՝ ատելի է նրանց համար... Հին ժամանակներում, երբ օսմանեան կայսրությունը բաւական հզօր էր իր քրիստոնեայ հպատակներին զսպելու համար, երբ արևմտեան կուլտուրայի ճառագայթները դեռ չէին հասել մինչև արևելք—խաղաղություն էր տիրում Մակեդոնիայում, ոչ ոք չէր մտածում ապատամբության մասին։ Իսկ այժմ, երբ Եւրոպական Թիւրքիայի քրիստոնեայ ազգությունները միմեանց յետևից ազատվել են և անկախ պետություններ են կազմել՝ Թիւրքահպատակ բոլգարները, սերբերը և յոները չեն կարող չը վարակվել իրանց ազատ եղբայրների օրինակից, չեն կարող հլու հպատակ լինել օտարի իշխանությանը։

Դեռ Խրիմի պատերազմից յետոյ Մակեդոնիայում կազմակերպվեցին գաղտնի ընկերություններ, որոնք լուսի-մնջիկ աշխատում էին ազատել իրանց հայրենիքը Թիւրքական լծից։ Հենց այդ պատճառով ոչ մի բարենորոգում չէ կարող բաւարարություն տալ այդ մարդկանց—նոյն-իսկ կառավարության արմատական բարեփոխությունը, բռնությունների թեթևությունը և կեանքի ու գոյքի ապահովությունը։ Այդ մարդիկ բոլորովին կորցրել են իրանց հաւատը դէպի Թիւրքական խոստումները, որովհետև Գիւլխանէի Հաթթի-Հիւմայունից յետոյ բարենորոգումների մասին շատ հրամաններ են հրատարակվել, բայց բոլորն էլ անիրագործելի են մնացել։—Թիւրքիան անկարող է բարենորոգվել, ասում էր իշխան Գորչակովը. որովհետև բարենորոգումը նրա համար մահ է նշանակում։

Այդ օրվանից անցել է երկար ժամանակ, բայց Թիւրքիան բոլորովին չէ փոխվել։ Ճիշտ է, Խրիմի պատերազմից մինչև այժմ զգալի չափով առաջադիմել է Թիւրքերի անհատական քաղաքակրթությունը. ճիշտ է, բազմացել են եւրոպական լեզուներ իմացող, բժշկությամբ, ճարտարապետությամբ ու վարչական գործունէությամբ պարապող էֆէնդիները և փաշաները, բայց դրա փոխարէն պետական կեանքը աւելի ու աւելի վատթարացել է, աւելի ու աւելի ընկել է—մանաւանդ վերջին տարիներում։ Դրա գլխաւոր պատճառները երկուսն են, 1) կառավարչական բացարձակ ինքնիշխանությունը, որ իր ասիական ձևը պահպանել է ճիշտ այնպէս, ինչպէս սրանից 200 տարի առաջ էր և 2) այն հանգամանքը, որ Թիւրքերը Եւրոպայում կատարած յաղթանակներով հպատակեցրել են երկիրներ, բայց ոչ ազգությունները։ Ցաղթված ազգերը, լեզուի և կրօնի ճնշումներ կրելով իշխող տարրի կողմից՝ միշտ թշնամի են մնացել և այժմ, կենտրոնական իշխանության թուլությունից օգտվելով, ուղղակի վտանգաւոր են դարձել նրա համար։

Այսպիսի պայմաններում Թիւրքիան իզուր է աշխատում իր քրիստոնեայ հպատակների համակրանքը գրաւել. անդունդն այնքան մեծ է, որ երբէք հաշտություն կայանալ չէ կարող։ Վարչական և առհասարակ պետական բարենորոգումները աջողություն կարող են ունենալ միայն այն ժամանակ, եթէ Թիւրքիայի բազմազան ազգերի միջից վերանայ վէճը, ատելությունն ու կասկածանքը. եթէ ազգաբնակության իւրաքանչիւր մասնիկը ուրախությամբ համաձայնի անուանել իրան «օսմանլի»—ինչ որ պահանջում է Թիւրքիայի պետական գործիչների երիտասարդ սերունդը։ Բայց դա անկարելի է. որովհետև այդ ազգությունների իւրաքանչիւրի համար աւելի սիրելի է հայ, բոլգար, յոն, ալբանացի և այլ անուններ՝ քան թէ «օսմանլի»։

Բացի դրանից, հարկաւոր է աչքի առաջ ունենալ, որ եթէ Թիւրքիան նոյն-իսկ բարի ցանկություն ու կամք ունենայ բարենորոգումներ մտցնելու համար՝ այնու ամենայնիւ նրան ժամանակ է հարկաւոր—երկար ժամանակ։ Զեռքի մի շարժումով անհնարին է բան կատարել այնտեղ, որտեղ դարերի ընթացքում արմատացել է կամայականությունը, մոլեռանդությունն ու վարչական ապականությունը։ Դժուար է երևակայել, թէ աւազակություններով ու սպանություններով մեծացած վայրենի ալբանացին յանկարծ կը մեղմանայ և կը հնազանդվի քրիստոնեայ ժանդարմին. նա այդպէս հեշտությամբ իր վրայից չի իջեցնի զէնքերը, չի ընդունի՝ «բոլորի համար հաւասար իրաւունքը», չի վճարի հարկերը։ Ո՛չ. դա անկարելի է մի ցեղի համար, որին գուրգուրել ուերես է տուել իշխանությունը ամբողջ դարերի ընթացքում...

Բարենորոգումներն անիրագործելի մնալու պատճառներից մէկն էլ սուլթանի անձնաւորությունն է և օսմանլիների այժմեան հասարակական կեանքը։

Ե. Թ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ոստիկանությունը Սալոնիկում ձերբակալեց բոլգարական եկեղեցու մօտ ապրող Մարկո Ստոյեան Վանոյին, որի վարձած խանութից էր փորված ական դէպի օսմանեան բանկի շինությունը։ Ցան ձին Վանոյի, ինչպէս կարծում են, ձերբակալված է մակեդոնական շարժման պարագլուխը։ Վանոն խոստովանեց իր յանցանքը դատաստանական քննության ժամանակ։ Վանոյի հետ միասին ձերբակալված է և այն տասը տէրը, որից Վանոն վարձել էր իր խանութը։ Ֆրանսիական «Գիլդալկվիվիր» շոգենաւի վրա տեղի ունեցած պայթման գործի համար զինուորական դատարանը դատապարտեց Պէչկովին մահվան պատժի։

Կ. Պոլսից հեռագրում են, թէ թիւրքական պատգամաւորության՝ Պետերբուրգ ուղարկելու լուրը, ըստ երևոյթին, արդարանում է։ Պատգամաւորության գլուխ անցած կը լինի սուլթանի որդի Բուրխանէդդին-էֆէնդին։ Մատնացոյց են անում այն բանի վրա, որ մինչև այժմ թիւրքական ոչ մի պրինց այդ տեսակ յանձնարարություն չէ ստացել։

—Բելգրադի «Трговински. Гласник» լրագրում Սոֆիայի դիպլոմատիական նախկին գործակալ Դայեա ապացուցանում է, որ բոլգարական հայրենասիրական լայն ծրագիրները աջակցություն են գտնում Սոֆիայի անգլիական դիպլոմատիայի կողմից։ Դայեան ենթադրում է, որ Անգլիան բալկանեան հարցը հասարում է մի միջոց՝ հեռացնելու Ռուսաստանի ուշադրությունը Հեռաւոր Արևելքի գործերից։ Իբրև քաղաքական նպատակներին ծառայեցնելու գործիք՝ Մեծ Բոլգարիան այլ ևս Անգլիայում չէ ծնեցնում այնպիսի կասկածներ, որոնք Բերլինի կոնգրէսում ստիպէին Անգլիային ամեն կերպ դիմադրել բոլգարների միացման,—Սատամբուլի մինիստրությունն ժամանակամիջոցը ցոյց տուեց, որ Անգլիան վստահությամբ կարող է յենվել միացեալ Բոլգարիայի վրա։

—Վիէննայի օսմանեան դեսպանությունը հրատարակել է հետեւեալ տեղեկությունը։ «Մօտվեց շաբաթ սրանից առաջ բոլգարական միտրոպոլիտը Հիւբրայից—իր ծառայության տեղից—ճանապարհ ընկաւ՝ Սալոնիկ գնալու, բայց նրա ճանապարհորդությունը ընդհատվեց Կրէզովում, որտեղ նրա անունով ստացվեցին գիրեր տակառներ։ Թիւրքական իշխանությունները, խուզարկելով տակառները, գտան նրանց մէջ փամփուշտներ Մարտինիի սիստէմի հրացանների համար։ Այն անձանց մօտ, որոնք ուղեկցում էին այդ ծանրոցին, գտնվեցան միտրոպոլիտի վրա կասկածներ գցող նամակներ և զանազան վկայագրեր։ Դիբրայում, միտրոպոլիտի ընակարանում տեղի ունեցած խուզարկության ժամանակ գտնվեցան մեծ քանակությամբ հրացաններ և փամփուշտներ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

15 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մաղթանքին Իսակիէվսկի տաճարում արքայական թագադրության օրը ներկայ էին Մեծ Իշխաններ Բորիս Վլադիմիրովիչ, Անդրէյ Վլադիմիրովիչ, Ալէքսէյ Ալէքսանդրովիչ, Դմիտրի Կոնստանտինովիչ, Նիկոլայ Նիկոլաեվիչ, Պետր Նիկոլաեվիչ, Սերգէյ Միխայլովիչ, Իշխան Գէորգի Մաքսիմիլիանովիչ Բոմանովսկի Դուքս Լիխտենբերգսկի, մինիստրները, բարձրաստիճան պաշտօնեաները և շատ քաղաքացիներ, որոնք եկել են յօբելեանական տօնախմբություններին։ Մաղթանքի ժամանակ Պետերբուրգի միտրոպոլիտ Անտոնի ծնկաչոք աղօթք կարդաց Թագաւորի համար։

Կ. ՊՕԼԻՍ։ Այստեղ կատարելապէս անհիմն են համարում «Figaro» լրագրի հաղորդագրությունը Թիւրքաց զօրքերի ենթադրեալ ընդհանուր մոբիլիզացիայի մասին։

Կ. ՊՕԼԻՍ։ Կալանաւորված կասկածելի բոլգարների ընդհանուր թիւը Մոնաստիրի վիլայետում, Սալոնիկում, Ադրիանոպոլում, նոյնպէս և այստեղ անցնում է 3000-ից։ Մինչև այժմ չէ հաստատված Խիլմի-փաշայի առաջարկությունը Տրիպոլի և Փոքր-Ասիա աքսորելու մասին այն բոլգարներին, որոնց մասնակցությունը կոմիտեների գործունէության մէջ հաստատված է, չը նայելով որ երևան չեկան առանձին գործունէությամբ։ Բ. Դուռը հաղորդում է, որ ալբանացիների դէմ գործողությունները սահմանափակվում են գլխաւոր դրդիչների կալանաւորությամբ և առ այժմ աջող են ընթանում։

ՍՕՖԻԱ։ «Agence Télégraphique Bulgaire» ցոյց է տալիս այն տեղեկության անհիմն լինելը, որ իբր թէ կառավարությունը Նաէվիչի վրա առանձին յանձնարարություն է դրել Կ. Պոլսում։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Հնդկաստանի գործերի պետական քարտուղարը հաղորդում է, որ Պէնջաբում, որի ազգաբնակության թիւը հասնում է 22½ միլիոնի, փետրվարի 1-ից մինչև մայիսի 2-ը ժանտախտից մեռել են 144,789 հոգի։

ՄԻՆՍԿ։ Ճանապարհ ընկաւ Պետերբուրգ Մինսկ քաղաքի պատգամաւորությունը ուղերձ մատուցանելու համար։

ԲԼԱԳՕՎԵՇՉԵՆՍԿ։ Հրապարակի վրա կատարվեց դոհացողական մաղթանք, և զինուորական նահանգապետը կարդաց շրջանի ազգաբնակության չնորհված Բարձրագոյն հրովարտակը՝ անցեալ չինական պատերազմի ժամանակ աշխատությունների և զրկանքների համար։ Հանդէսին ներկայ էին զինուորական և քաղաքացիական պաշտօնեաները, տեղական բերդապահ զօրքի բոլոր զօրամասերը, քաղաքի, կազակների և գիւղացիների ներկայացուցիչները։ կամաւորները և Բլագովէշչենսկի պաշտպանության մասնակցողները 1900 թուին, քաղաքային դպրոցների աշակերտները և բազմաթիւ ժողովուրդ։ Ողեորված «ուրայով» ընդունվեցին Բարձրագոյն հրովարտակի բարձր ողորմած խօսքերը։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Ժամանեց ժողովրդական լուսաւորության մինիստրը։

Քաղաքի պատգամաւորությունը ուղեորվեց Պետերբուրգ՝ յօբելեանին։

ՆՈՎԳՈՐՈԴ։ Ճանապարհ ընկաւ Պետերբուրգ քաղաքային դումայի պատգամաւորությունը։ Ցանում են ողջոյնի ուղերձ, որը յիշեցնում է, որ Պետերբուրգի հիմքն են կազմում նովգորոդցիների ոսկորները. ապա կը մատուցանեն Աստուածամօր հրաշագործ պատկերի պատճէնը։

ՏԱԳԱՆՐՕԳ։ Պատարագից յետոյ Ուսպէնսկի տաճարում, թափորը բոլոր եկեղեցիներից շարժվեց դէպի այն արձանը, որ կառուցված է Տաղանրօգի հիմնադիր Կայսր Պետրոս Ի-ի համար։ Մաղթանքը վերջացնելուց յետոյ, երկար տարիներ մաղթելով Թագաւոր Կայսրին և ամբողջ Արքայական Տանը և յաւիտենական յիշատակ Կայսր Պետրոս Ի-ին, վայր ընկաւ ծածկոցը ազգային հիմնի երգելու և թնդանոթաձգության ժամանակ։ Զրքերը անցան արձանի առջևից։

ՍԼԱՎԵԱՆՍԿ։ Բացվեց հանքային ջրերի սեզոնը։

ԼՕՆԴՕՆ։ Լօրդերի ժողովը յետաձգեց նիստերը մինչև մայիսի 20-ը։

ԲՈՒԽԱՐԷՍՏ։ «Ռումինական գործակալությունը» լիազորություն ունի յայտնելու, որ հիմքից զուրկ է հակասեմիտական շարժման մասին լուրը։

ՀՌՕՄ։ Վիկտոր-Էմմանուէլ թագաւորի Լոնդոն ժամանումը նշանակված է յունիսի 25-ին. երեք օրով վաղ թագաւորը կը գայ Պարիզ և կայցելէ Լուբէին։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողով։ Բէրրի առաջարկում է մայիսի 19-ից մինչև յուլիսի 2-ի ժամանակամիջոցում իջեցնել մաքսահարկը հացահատիկի վրա մինչև 5 ֆրանկ։ Պատգամաւորների ժողովը մերժեց այդ առաջարկությունը։ Սենատն ընդունեց զինուորական օրէնքի առաջին 16 յօդուածները։

Կ. ՊՕԼԻՍ։ «Agence de Constantinople» յայտնում է, որ կատարելապէս անհիմն է այն լուրը, թէ Պետերբուրգ է ուղարկվում յատուկ Թիւրքական միսսիա, գլուխ ունենալով պրինց Մահմէդ-Բուրխան-էդդին-էֆէնդին։

ՎԻԷՆՆԱ։ Համայնական խորհուրդը վճռեց միաձայն, բացի մէկ սոցիալ-դէմոկրատից, ծանուցանել Պետերբուրգի քաղաքային դումային, որ նա իմացաւ սրտագին երախտագիտությամբ յօբելեանին հրաւիրելու մասին, և չափազանց ցաւում է, որ չէ կարող ընդունել հրաւէրը, այլ ստիպված է ներկայանալ առաջադիմություն մաղթելով Պետերբուրգին—Պրագայի քաղաքային խորհուրդը, 11 ձայնով 6-ի դէմ, որոշեց Պետերբուրգ ուղարկել չնորհաւորական նամակ, առանց պատգամաւորության։—«Frankfurter Zeitung» հաղորդում է, թէ նախկին մինիստր Նաէվիչ իր վրա ստանձնեց պարտաւորություն՝ իբրև բոլգարական կառավարության արտակարգ պատգամաւոր, բանակցություններ վարել անմիջապէս Բ. Դռան հետ, մակեդոնական հարցի վերաբերմամբ համաձայնություն կայացնելու համար։

ՍՕՖԻԱ։ Նաէվիչ մեկնեց Կ. Պոլիս, որպէսզի բանակցություններ սկսէ՝ մակեդոնական հարցի վերաբերմամբ modus vivendi հաստատելու համար։ Նա ստացաւ մինիստրից յատուկ հրահանգներ և խորհրդակցեց Թիւրքական պատուիրակի հետ։ Զը նայելով «Բոլգարական հեռագրական գործակալության» հերքումներին՝ «Вечерня Поста» պնդում է, թէ Նաէվիչ գնում է կառավարության ցանկությամբ։ Եթէ գործակալությունը հերքում է պատգամաւորության պաշտօնական բնաւորությունը՝ պատճառն այն է, որ լիովին չէ հաւատում նրա աջողությանը։—Իշխանը և բոլոր մինիստրները մեկնեցին դէպի Կարլովօ, որպէսզի ներկայ լինեն ազգային հերոս Լեվսկիի արձանի հիմնարկէքին. այստեղից նրանք կը գնան Բուրգաս, որտեղ մայիսի 18-ին տեղի կունենայ նաւահանգստի բացումը։

ՍԱՆՏ-ԵԱԳՕ։ Իկվենում ժանտախտ երևալու պատճառ համարվում է Հնդկաստանից եկած բրնձի բեռը։

ՑԵՏԻՆԻԷ։ Զերնոգորիային ռահմանակից Թիւրքական նահանգներում տիրում է կատարեալ խաղաղություն։

16 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագաւոր Կայսրը Բարձրագոյն բարեհաճեց հրամայել ներքին գործերի մինիստրին՝ Ուֆայի նահանգապետ ներգործական պետական խորհրդական Բոգդանովիչի թաղման օրը՝ Նորին Մեծության Արքայական ցաւակցությունը յայտնել հանգուցեալի ընտանիքին և հաղորդել, որ Նորին Կայսերական Մեծությունը առ միշտ կը պահէ հանգուցեալի յիշատակը, որ իր քաջարի մահով դրոշմեց Հր հաւատարիմ ծառայությունը դահին և հայրենիքին։—Նորին Կայսերական Մեծության Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Թէոդորովնայի ուլանները մայիսի 15-ին տոնեցին գնդի 250-ամեայ յօբելեանը։ Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա

*) Fr. Naumann: „Asia“, Berlin, Verlag der „Hilfe“.

*) „Deutsche Rundschau“ 1896. Februar S. 222.

Ֆէօդորովնա կրում էին անձնաթիկնապահ Ուլանեան գնդի համազգեստ՝ անդրէյեան ժապաւէններով։ Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին ձի հեծան և շրջան կատարելուց ու մաղթանքից յետոյ Թագաւոր Կայսրը Գեորգիեվսկի դրօշակին կապեց յօբելեանական ժապաւէնը։ Երբ դունդը կազմակերպվեց հանդիսաւոր գնացքի՝ նրա Օդոստափառ շէֆը, Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէօդորովնա՝ նրա գլուխն անցաւ և դունդը անցկացրեց Թագաւոր Կայսրի մօտով։

ՍՕՖԻԱ, «Correspondenz Bureau»-ն ճիշտ չէ հաղորդել, իբր թէ Սարաֆով վերադարձել է Բոլգարիա։—Սելեանովի մօտ, Մելնիքեան զաղայում, Դօնչօ վոյեվոդան պատահեց թիւրքական զօրքի։ Ընդհարումը տևեց մի քանի ժամ։ Նոր փախստականներ եկան Դուբնիցա և Սամակով։

Կ. ՊՕԼԻՍ։ Նաչնվիչ հասաւ այստեղ։

ԷՍՍԷՆՏՈՒԿԻ։ Էսսէնտուկի ջրերի սեզօնը բացվեց։ Հիւանդներ եկած են հերուանից աւելի։ Օրհնված և բացված է նոր հիւրանոց, որի մէջ 100 նօմէր բացված են հասարակութեան համար, մի ուրիշ 100 էլ կը բացվեն մի շաբաթից։

ՆՈՎԳՈՐՈԴ։ «Волховскій Листокъ»-ին հեռագրում են, թէ ճանապարհների հաղորդակցութեան ինժենէր Բօրէյշա նուիրել է եկեղեցական երկդասեան օրիորդաց ուսումնարանի օգտին գեաին և անտառ, քարաշէն եկեղեցով և տնով, 110,000 բուբլի արժէքով։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների պալատ։ Լաբուշէր հարցանդուում արեց, թէ արդեօք գոյութիւն ունի Անգլիայի և Պարսկաստանի մէջ որևէ դաշնագիր, որով Պարսկաստանին տրդելվէր կարգադրութիւն անել իր հողերի մասին Պարսկական ծոցի մօտ, ինչպէս և ուրիշ տեղերում։ Կրամբրէն պատասխանեց, թէ այդպիսի դաշնագիր գոյութիւն չունի. բայց հարաւային Պարսկաստանում մեծ բրիտանական կառավարութիւնը վայելում է առանձին իրաւունքներ, որ տրված են Պարսկաստանից։ Բացի սրանից գոյութիւն ունի համաձայնութիւն Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի մէջ՝ Պարսկաստանի անկախութիւնը և անձեռնմխելիութիւնը պահպանելու մասին։

ՍՕՖԻԱ։ 52 ապստամբներից բաղկացած մի խումբ հանդիպեց թիւրքերին։ Սպանված են ապստամբներից 15 հոգի և հրամանատար Զէլալ-բէյը։ Թիւրքերն շրջանում ապստամբներ երևացին մի քանի տեղերում—Պարիզի թիւրքական դեսպանի ուղարկած լուրը, որ հաղորդված էր լրագիրներին, իբր թէ գտնվել են փամփուշտներ և հրացաններ, որ իբր թէ ուղարկված են եղել Դիբրու, բոլգարական միտրոպոլիտին—անհիմն է։ Լուրը նպատակ ունի լրագիրների միջոցով Եւրոպայի հասարակութեան աչքում արդարացնել Թիւրքիայի վերջերս ձեռք առած անարդար միջոցները Մակեդոնիայի բոլգար հոգևորականների դէմ։

Կ. ՊՕԼԻՍ։ Հիւպատոսների Մոնաստիրից ուղարկած զեկուցումներին նայելով՝ այս վիլայէթում գործերի դրութիւնը և թիւրք ազգաբնակութեան տրամադրութիւնը երկիւղ են ազդում, մանաւանդ բոլգարների խմբական ձերբակալութիւնները; որ կատարվում են յախուռն կերպով։ Բոլգարների դէմ ձեռք առնված արտակարգ միջոցները չափից անց են կացել և տարածվում են գործերին անհաղորդ անձերի վրա։ Ուսկիւբի, Սալոնիկի, Ադրեանուպօլսի և մանաւանդ Մոնաստիրի վիլայէթներում ձերբակալված բոլգարների մէջ կան շատ հոգևորականներ։ Գիւղերի ընակիչները բողոքեցին սրա դէմ, յայտնելով որ նոյնիսկ թագում կատարելու համար հոգևորական չը կայ։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների պալատը առաջին ընթերցանութեամբ, 142 ձայնով 82-ի դէմ, ընդունեց այն օրինագիծը, որով կառավարութեանը լիազօրութիւն է տրվում արգելել ներմուծումը այն շաքարի, որի համար պրէմիա է տրված։

ՀԱՄԲՈՒՐԳ։ Դանիական թագաւորն եկաւ և մեկնում է դէպի Վիսբադէն։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ և վաճառվում է

ԱՂՄԿԱՅՈՅԶ ԳՈՐԾԸ

գրքոյկը։ Գինն է 10 կոպ.

Դիմել՝ Баку, Т—во „Прометеусъ“, Красноводская ул. 2—4

ПОСОБІЕ ДЛЯ ТОРГОВЦЕВЪ

Законы, ограждающіе интересы торговцевъ противъ неисправныхъ должниковъ. О штрафахъ и наказаніяхъ. Уставы: Гербовый и вексельный. Формы векселей и прошеній 1903 г. Ц. 20 к., съ пересылкой 25 к. Обращаться ко всѣмъ книгопродавцамъ или къ издателю: въ Александрополь, Д. Попандопуло.

Книгопродавцамъ уступка 30%. 1—5

ԱՐԱԲԻ

Շուտով լոյս կը տեսնէ

ԳԵՐԻՆԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

(Գ ո է տ ա)

Գինը 20 կոպ.

Դիմել՝ Тифлисъ, Абасъ-Абатская № 25, Арташесу Абалянцу, կամ Կենտրոնական գրավաճառանոց։ 1—3

ԲԵՐԱՆԻ ԵՒ ԱՏԱՄԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԺԻՇԿ

Կ. ԿԷՕՆՃԵԱՆ

ամբանոց գնալու պատճառով ընդհատում է հիւանդների ընդունելութիւնը։ 1—1

ԲԺՇԿԱԳՆՏ

ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻՆ

նախկին տարիների նման, մայիսի 15-ից ընդունում է հիւանդներին Կովկասեան հանքատեղի Ջրերում։

Հասցէն. Пятигорскъ, Верхній Бульваръ, д. Султанъ-Гирея. 2—10

ԲԺԻՇԿ

Գ. Մ. ԵՓՐԻԿԵԱՆ

կազմում է խորհուրդներ տէրտ պրոֆէսօրների հետ՝ Վիէննա եկող հիւանդների համար։

Dr. Med. Paul Afrikian. Wien. VIII., Langegasse, 60, Thur 1. (2.) 15—35

ԳՈՒՏԵՆԲԷՐԳ

գրախանութում վաճառվում են՝

Սասուն, Ա. Քալանթարի—20 կ.
Զէյթուն, Հ. Առաքելեանի 20 կ.։
Ժամագիրք Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, կաշեկազմ 2 ր.
Գիրք Սաղմոսաց Դաւթի, կաշեկազմ 80 կ.
Սայաթ-Նովայի երգերը 50 կ.
Ուսեալ պանդուխտ Յովհան 15 կ.
Հայ աշուղներ, Լեոնեանի 30 կ.
Քեարամի և Ասլիի հէք։ Աշըղ-Զիւանու 60 կ։
Աշըղ-Ղարիբի հէք. հանդ. երգ., Զիւանու 40 կ.
Շահ Իսմայիլի 30 կ.
Մէլիք-Շահի հէքիաթը 25 կ.
Ասմանի և Զէյնանի 25 կ.
Քնար Զիւանու, ա. հատոր 50 կ.
Քեօռ-օղլու հէքիաթը, Գիրիբ-օղլու և Պօլիբէկի հետ պատահած անցքերը—40 կ.
Աշուղ-Ազատի հէք., Մաշլումեանցի—40 կ.
Դահար Միրզա և Զօրաբ-խանումի հէք. 30 կ.
Մարոյի ալբոմը, Մ. Մարիկեանցի 20 կ.
Կեղծաւոր դար, Թարգ. Մ. վարդապետի 25 կ.
Տաղեր և խաղեր, ժողովրդական երգեր և պար-երգեր 60 կ.
Տիծաղի տոպրակ և անեկդոտ., Շահազիզի 50 կ.
Հայ ժողովրդական հէքիաթներ, Նաւասարդեանի 50 կ.
Հայ աշուղներ, Գ. Ախվերդեանցի, ընտիր թղթի վրա տպած 1 ր. 50 կ.
Ս. Երգեցողութիւնք առաւօտեան 20 կ.
Անձայն կիթառ. երգիչ Խայաթու 55 կ.
Հազարան-Բլբուլ, Ցար. Թումանեանի 30 կ.
Մելիք-Բէգլար և Մելիք-Իւսուֆ, նոյնի 30 կ.
Թագաւոր Լուսի և Սեթեւ հովիւ, Հայկունու 25 կ.
Մոքոս, ժողովրդական վէպ. 25 կ.
Սամէլ Հովիկ և Հոռթութիկ 10 կ.
Նահապետ Քուչակի դիւանը, հրատ. Ա. Զապանեան 1 ր. 50 կ.
Առիւծաձև Մհեր, ազգային դիւցազնական պօէմա, Բալասանի 25 կ.
Ռոստոմ և Սալման հէքիաթ Բալաս. 25 կ.
Քուչուկ Նահապետի երգերը, Ց. Թադէոսեան 15 կ.

Դիմել.—Книж. магаз. „Гуттенбергъ“ д. Лалаева, Дворцовая, Галустяну։ Վերադիրով գրքեր կուղարկվեն նրանց, որոնցից կը ստացվի կանխավճար։ Գրախանութի հետ գործ ունեցողներին խնդրում ենք, ամեն մի պատուէրի ժամանակ յայտնել իրանց մանրամասն հասցէն։ 3—3

ՆԱԻԹ-ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՈՐՈՏԱՆ“

Այսու յայտնում է ի գիտութիւն իր փայատէրերի, որ սոյն մայիսի 15-ից սկսած՝ ամեն օր առաւօտեան 10 ժամից մինչև մէկը, կը վճարէ իր գրասենեակում կանխապէս ի հաշիւ 1903 թ. դիվիդենտի՝ 4% տոկոս հիմնական դրամագլխից, իւրաքանչիւր փայի համար տասը բուբլի։ Փողը ստանալու ժամանակ պէտք է ներկայացնել փայատոմսերը, № 2 կտրոնը ոչնչացնելու և նրանց վրա պատշաճաւոր նկատողութիւն անելու համար։ 1—4

ՆԵՐԱՐԿՈՒՄՆ ՄԱՏԻԿՈՒ

(INJECTION AU MATICO)

Դրիսմ և ընկ դեղագործների թոյլ է տրված Ռուսաստանում։ Այս հեղուկի մէջ չահագործված են պերուանեան Մատիկո բոյսի յատկութիւնները, մի բոյս, որ զարմանալի կերպով բժշկում է հնտորէյը (սերմնաթափութիւն) և մի քանի տարվայ ընթացքում հանգստարարային հռչակ է ստացել։ Ցարմ ժամանակում բուժում է ամենազօրեղ սերմնաթափութիւնները։

Պարիզ, 8 Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։ (2, 17) 10—24

ՀԱՅ ԾՆՈՂՆԵՐՈՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԴՊՐՈՑ

ԼՕԶԱՆ, ՋՈՒՆԵՑԵՐԻԱ

Երկրորդ տարի

(16-րդ անգամին սկսեալ. ձմեռուան վեցամսեայ դասերը կը սկսին սեպտ. 1/14-ին)

Արեւելեան կամ հայկական դպրոցը կընդունի 10-էն 20 տարեկան աշակերտներ, որոնց կուտայ, ծնողներու բաղձանքին համեմատ, գիտական, գրական, առեւտրական կամ արդիւնաբերական առողջ ու հիմնաւոր կրթութիւն՝ ներդաշնակօրէն և սերտ կերպով միացած ազգային հիմնական դաստիարակութեան հետ։ Մեր հայ տաներուն կաւանդենք, և այս՝ առանց սեւ է մանաւոր վճարումի, հայոց լեզու (ռուսահայ և տաճկահայ բարբառ), մատենագրութիւն հայոց (հին և նոր), հայոց պատմութիւն և այլն։ Ռուսահայ աշակերտները կարող են նաև ուսանել ռուսաց լեզուն։

Դպրոցիս տարեթուակը, հակառակ իր ընդհանուր բաղմաթիւ իրական առաւելութիւններուն, անօրինակ կերպով չափաւոր է։—Ընտանեկան կեանք։—Դպրոցիս յայտագիրը սոսկ ուղղի կը դրկուի։

Տնօրէն՝ Մ. Նալբանդեան, գիտ. գիտութեանց՝ պրիվատ-դոցենտ

1) Longeraie, Lausanne, Suisse 17—27

● ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ ●

Գ. ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆԻ

Դոկտոր քիմիական գիտութիւնների

Ընդունում է ամեն տեսակ նիւթերի և հանքերի անալիզներ (որակական և քանակական)։

Հանքերի մանրամասն ուսումնասիրութիւններ և հետախուզութիւններ։

Դիմել հետեւեալ հասցէին. Докторъ Г. Пастермаджіанъ. Вельяминовская ул., 19. ТИФЛИСЪ. 2—10

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ԴԱԳԷԹԳԱ“

ծովային, գետային եւ ցամաքային ապահովագրութեան, ապրանքների տեղափոխութեան եւ գոյքերը կրակից ապահովագրելու համար։

ՀԻՄՆՎԱԾ է 1847 ԹՒԻՆ

Հիմնական գրամագլուխը . . . . . 1,650,000 բուբլի
Պահեստի դրամագլուխը . . . . . 2,664,808 »

Ի. ԱԳՐԱՆՏՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

Աւելի քան 300 գործակալութիւններ եւրոպական Ռուսաստանի, Կովկասի, Միջին Ասիայի, Սիբիրի եւ հեռաւոր Արեւելքի բոլոր նշանաւոր տեղերում, նոյնպէս եւ ներկայացուցիչներ արտասահմանի գլխաւոր քաղաքներում։

Տեղափոխութիւն ամեն տեսակ բեռների եւ իրերի, որոնց ընդունելութիւնը եւ յանձնումը կատարվում է թէ տանը եւ թէ պահեստներում ու խանութներում։

Յանձնուած բեռների ուղարկիչների կողմից առաջարկված պայմաններով (վերադիր չճարներ ի հաշիւ ուղարկիչների, դրամի փոխադրութիւն (переводъ) բեռները յանձնելու տեղը հասցնելու համար եւ այլն)։

Ահագնութիւն բեռների արտաքին պայմաններով ստացման տեղերում՝ ապահովագրելով նրանց պահեստներում, որի համար շատ կէտերում կան ընդարձակ պահեստներ, յատկապէս բեռներ պահելու համար։

Ի. ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Սեփական մարդատար, ապրանքատար եւ ձգող շոգենաւեր, ծովային եւ գետային նաւեր (70 նաւ)։

Բեռնատիպ եւ մարդատար նաւերի պարբերական հաղորդակցութիւն Վոլգա գետի բոլոր նաւահանգիստների մէջ, Ռիբինսկից մինչեւ Աստրախան եւ Կասպից ծովի բոլոր նաւահանգիստների մէջ, Աստրախանից մինչեւ Պարսկաստանի ափերը։

Ամենաընդարձակ պահեստներ Նիժնիում (տիրական նաւամատոյցի վրա), Աստրախանում, Բաքուում եւ Կրասնովոդսկում։

Բեռները անընդհատապէս ուղարկելու համար ընկերութեան շոգենաւագնացութիւնը համաձայնութիւն է կոռել երկաթուղիների հետ։ Այն ապրանքների տեղափոխութեան համար, որոնք ուղարկվում են Ռուսաստանից Պարսկաստան եւ Պարսկաստանից Ռուսաստան, գոյութիւն ունի առանձին, բացառիկ առօգուտիւցներով, համաձայնութիւն Պարսկական ապահովագրական եւ տեղափոխութեան ընկերութեան հետ։

Ա. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ։

ա) Ապահովագրութիւն բեռների, որոնք տեղափոխվում են թէ ցամաքային եւ թէ ջրային ճանապարհներով (ծովերով եւ գետերով)։

բ) Ապահովագրութիւն կրակից ամեն տեսակ գոյքերի։

գ) Ապահովագրութիւն ամեն տեսակ դժբաղդ դէպքերից ճանապարհին ամեն տեսակ նաւերի, շոգենաւերի, առագաստանաւերի, վագոնների և վագոն-ցիստերնների։

դ) Ապահովագրութիւն թանգագին իրերի և արժէքաւոր ի՛ղիերի, որոնք ուղարկվում են պատով, ցամաքային և ծովային ճանապարհներով, համաշխարհային պատային գաղնակցութեան բոլոր կէտերի մէջ։

Ապահովագրութիւններ ընդունվում են ինչպէս վարչութեան, այնպէս էլ ամեն տեղ ընկերութեան բոլոր գործակալութիւնների մէջ։

Բացի տեղափոխութեամբ պարապող գործակալութիւններից, կրակից ապահովագրելու գործերով մասնաւորապէս զբաղվում են էլի ուրիշ 350 գործակալութիւններ։

Ս. Պետերբուրգի հասցէն՝ ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետերբուրգում, Նադմիրալտեյսկի, պրոսպեկտի վրա, № 10-բրդ տան։

Լիազօրներ—ծովային շոգենաւագնացութեան համար՝ Բաքում, գետային շոգենաւագնացութեան համար՝ Նիժնի-Նովգորոդում։

Թիֆլիսի գործակալութիւնը—Դվորցովայա փողոցի վրա, վրաց ազնվականների տանը։ Տելեֆոն № 108 (հ. ա. կ.) 77—120

Дозволено Цензурою. Тифлисъ, 16 Мая 1903 г.

Электропечатня Груз. Изд. Т—ва, В. Вельяминская ул.